

Այունյաց երկիր

www.syuniacyer.kir.am

Նա Կապանի առաջնորդը եղավ դժվարին օրերում

ՀՈԲԵԼՅԱՆ

«Այունյաց երկիրը» շարունակում է անդրադառնալ Սյունիքի պատմության նորագույն շրջանի առանցքային իրադարձություններին և այն գործիչների կյանքին ու գործունեությանը, ովքեր նշանակալից դեր խաղացին այդ ընթացքում: Նպատակը հստակ է՝ ճշմարտության հավելյալ լույս սփռել մեր երկրամասի պատմության այդ շրջանի վրա, երեկվա և այսօրվա սերնդի միջև ապահովել հաջորդականություն, փորձել ամբողջացնել և հանրությանը ներկայացնել տեղական այն լիդերներին, ովքեր պատմական որոշակի ժամանակահատվածում առաջնորդել են Սյունյաց աշխարհի կամ նրա առանձին շրջանների (գավառների) երթը և կռիվը ներդրում ունեցել կոնկրետ հիմնախնդիրների լուծման գործում: Սյունյաց կողմից՝ մենք պարտավոր ենք մոռացությունից կորզել նրանց և հնարավորինս բնակեցնել նոր սերնդի հիշողության մեջ: Այդ մարդիկ, այդ սերնդի ներկայացուցիչներն արդարացիորեն մեզանից արթուն վերաբերմունք են ակնկալում:

Խոսքն այս անգամ Կարեն Մկրտչյանի մասին է, ով 1983-88թթ. գլխավորել է Կապանի շրջափոխի գործկոմը, 1988-91թթ.՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կապանի շրջկոմը, ով վաստակի առումով այդ շրջանի խորհրդային էպոխայի երախտավորներից է: Առիթը նրա ծննդյան 65-ամյակն է, որ լրացավ 2012թ. մայիսի 20-ին:

Կարեն Մկրտչյանի կերպարն ուշագրավ է մի քանի առումով: Նախ՝ նա Կապանի իշխանության ղեկը ստանձնեց մեր պատմության հիրավի դժվարին ու հակասական, բայց և հերոսական օրերում՝ ազգային զարթոնք, Արցախյան գոյամարտ, իշխող գաղափարախոսության և պետական կարգի ճգնաժամ (հաճախ՝ երկիշխանության ակնհայտ դրսևորումներով), տնտեսական կապերի փլուզման սկիզբ, հարողակցության (հատկապես՝ տրանսպորտային) ուղիների մինչ այդ գործող համակարգի (շրջափակումների հետեւանքով) կազմալուծում և նոր ուղիների ստեղծում, ժողովրդագրական դարակազմի տեղաշարժեր (շրջանի 22 բնակավայրից մոտ 15 հազար արթեքանցու արտագաղթ, ինճ հազար հայի ներգաղթ ու բնակեցում շրջանում): Այդ հիմնախնդիրների շուրջ ստեղծված իրավիճակից, տարիների հեռվից կարելի է ստույգ ասել, նա դուրս եկավ այրաբար: Եվ գործերի մի շարք հեղինակեց ու այնպիսի վարք դրսևորեց, որ հարգանքի է արժանի: Միաժամանակ՝ նա ժամանակների ու հասարակարգերի ճանփաբաժնում հայտնված սերնդի ներկայացուցիչ է, նոր կարգերի կառուցմանը, անկախ պետականությանը զինվորագրված սերնդի մարմնացումը: Զնոռանանք, որ այդ ժամանակաշրջանն անցումային էր, որը բոլոր ժողովուրդների պատմության մեջ (մեկ հասարակարգից մյուսին անցնելիս) սովորական չի եղել: Հրանտ Մաթեոսյանն է նկատել. «Ահա մենք այդ կայսրության, թեկուզե այդ կոչեինք չարիքի թագավորություն, փլուզման պայմաններում ենք ապրում: Ոչ երանի մեզ»:

Կարեն Մկրտչյանի դիմանկարն ավելի ցայտուն է և ամբողջական կհառնի, եթե նրա մասին դատողություններ անենք կուսակցական, գաղափարախոսական նախապաշարումներից դուրս և ըստ կատարված աշխատանքի: Խորհրդային պետության փլուզման և Շարունակությունը՝ էջ 8



ԱՅՏԵՍԱՐՏ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ. ծնվել է 1947թ. մայիսի 20-ին Կապանի շրջանի Կաթնառատ գյուղում: 1964թ. ավարտել է Քաջարանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը: 1969թ. ավարտելով ինստիտուտը՝ գործուղվել է Քաջարանի շինարարական տեխնիկում, որտեղ աշխատել է մասնագիտական առարկաների դասախոս, ապա՝ դիրեկտորի ուսումնական գծով տեղակալ: 1971թ. ընտրվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար (շրջկոմի իրավունքով): 1974թ. նշանակվել է Կապանի շինարարական տեխնիկումի տնօրեն: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կոմունիստները 1976թ. նրան ընտրել են կոմբինատի կուսակցական կոմիտեի քարտուղար, իսկ Քաջարանի և Կապանի կոմբինատների միավորումից հետո ընտրվել է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար: 1979-1982թթ. սովորել և ավարտել է ԽՄԿԿ կենտկոմին առընթեր կուսակցական բարձրագույն դպրոցը: 1983թ. ընտրվել է Կապանի շրջափոխի գործկոմի նախագահ, իսկ 1988թ.՝ ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար՝ աշխատելով մինչև 1991 թվականը: Հետագա տարիներին՝ սկսած 1991 թվականից, աշխատել է Կապանի պահածոների գործարանի, անտառտնտեսության, Կապանի ջրմուղկոյուղու «Խուստուփ» ՓԲԸ, Հայպետտնտնտեսության «Կապան-Թեսթ» ՓԲԸ տնօրեն, իսկ 2005 թվականից՝ «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ շինարարության գծով տնօրենի տեղակալ: Պարգևատրվել է «Պատվո ճան» շքանշանով, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով և մի շարք պատվոգրերով, հուշամեդալներով: ՀԿԿ կենտկոմի անդամ էր (1989-91թթ.), Հայաստանի Հանրապետության առաջին գումարման գերագույն խորհրդի պատգամավոր (1990-1995թթ.): Ամուսնացած է, ունի երկու զավակ: 2000 թվականից ՀՀԿ անդամ է:

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ.
«Հնարավորություններիս սահմաններում այսուհետք ևս կնպաստեմ մեր երկրամասի, իմ բնօրրան Կապանի ու Քաջարանի հեղազազարգացմանը» 2

Իրավաբանական հարցազրույց

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ. «Ջնարավորությունների սահմաններում այսուհետ եւս կնպաստեն մեր երկրամասի, իմ բնօրրան Կապանի ու Քաջարանի հեղափոխական գաղափարները»

Կարեն Մկրտչյանի հետ զրույցելու անհրաժեշտությունը վաղուց էր հաստատվել: Նա խորհրդային էպոխայից անկախության ճանապարհ ելնող Հայաստանի խոշոր շրջաններից մեկի՝ Կապանի ղեկավարն էր: Եվ ուրեմն հեղափոխություն էր դժվարին այդ ժամանակների իրադարձությունների վերնուշև ու վերագնահատումը գլխավոր գործող անձանցից մեկի օգնությամբ: Հեղափոխություն էին նաև նրա պարկերացումները մեր ներկա ընթացքի ու Կապանի վաղվա օրվա մասին: Այդպիսի զրույցի առիթ հանդիսացավ Կարեն Մկրտչյանի ծննդյան 65-ամյակը:

– Պարոն Մկրտչյան, Ձեր կենսագրության ամենապատասխանատու շրջանը կարելի է համարել 1980-ականների վերջը: Պատերազմ, հեղափոխություն, երկրաշարժից շնչահեղձ լինող հանրապետություն, հաղորդակցության ուղիների շրջափակում, տնտեսական երբեմնի կապերի թուլացում կամ վերացում... Եվ դժվարին ու հակասական այդ հանգրվանում, ճակատագրի կամոք, Դուք էիք Կապանի ղեկին: Շատ իրադարձություններ կարելի է հիշել՝ այդ ժամանակներն արտացոլող, բայց... Մի դրվագ, այնուամենայնիվ, ուզում ենք առանձնացնել, որ առավել ուշագրավ պիտի համարել: Այդ ժամանակ, փաստորեն, տեղի ունեցավ աղբյուրների տեղափոխությունը (տեղահանումը կամ արտագաղթը) Կապանի շրջանից: Դա, որքանով հիշում ենք, սովորական օպերացիա չէր: Մոտ 15 հազար աղբյուրացի, որ կազմում էր Կապանի շրջանի բնակչության 23-24%-ը, խաղաղ, առանց ցնցումների, առանց արյունահեղության հեռացավ Կապանից: Այդ օրերի համար դա ոչ սովորական երեւույթ էր: Ձանգվածային այդ տեղաշարժի խաղաղ բնույթը, անշուշտ, պայմանավորված էր նախնախնայ կապանցիների հանդուրժողական էությանը: Բայց եւ շատ կարելու էր Կապանի տեղական իշխանության (որի գլուխը Դուք էիք) գործելակերպը: Մյուս կողմից՝ Կապանը ստիպված էր ընդունել եւ տեղավորել Աղբյուրացի գաղթած մոտ 5 հազար հայի: Միզուցեց հիշե՞նք այդ եւ տվյալ ժամանակաշրջանն արտացոլող մյուս կարևոր իրադարձություններն ու պատմական անցքերը:

– Դուք ճիշտ նկատեցիք՝ հաջողվեց եթեհիկական հողի վրա թույլ չտալ արյունահեղություն, որն այդ ժամանակ եւ հետագայում հավելյալ խնդիրներ կառաջացներ մեր երկրի համար՝ նաեւ միջազգային առումով: Փաստորեն առանց լուրջ միջադեպերի ամբողջ շրջանը դատարկվեց մոտ 15 հազար աղբյուրացի, եւ դրանց փոխարեն ընդունեցինք ու տեղավորեցինք ավելի քան հինգ հազար հայ փախստականի՝ ապահովելով բնակվելու ու ապրելու անհրաժեշտ պայմաններով եւ միջոցներով: Սակայն, այդ օրերի թիվ մեկ խնդիրը, բնականաբար, սահմանափակում էր բնակվող մարդկանց անվտանգության ապահովումն էր: Շրջանային կոմիտեում ստեղծելով «Իրավիճակի վերահսկման շրջանային շտաբ», որում, բացի շրջանի ղեկավարներից ու իրավապահ մարմինների ներկայացուցիչներից, ընդգրկվեցին համազգային շարժման ակտիվիստներ, կարողացանք համախմբել ժողովրդին եւ միասնական ուժերով ապահովել սահմանների պաշտպանությունը՝ կոորդինացնելով միաժամանակ այլ շրջաններից մեզ մոտ եկած մարտական ջոկատների գործունեությունը: Այնուհետեւ՝ շրջափակման պայմաններում կարողացանք բնակչությանն անխափան ապահովել սննդամթերքով եւ առաջին անհրաժեշտության ապրանքներով: Ձուգահեռաբար շարունակում էինք մեր մասնակ-

ցությունն աղետի գոտու վերականգնման աշխատանքներին: Պարենամբերքով եւ շինանյութով օգնում էինք շրջափակման մեջ հայտնված Լեռնային Ղարաբաղին: Միաժամանակ՝ թեեւ ոչ լրիվ կարողություններով, բայց շարունակվեց ձեռնարկությունների աշխատանքը՝ առանց ընդհատումների: Այդ ամենին զուգահեռ լուծում էին ստանում նաեւ շրջանի սոցիալ-տնտեսական ոլորտների տարբեր խնդիրներ ու պրոբլեմներ: Արդյունքը եղավ այն, որ տեղի չունեցավ հայ բնակչության արտագաղթ, ժողովուրդը խուճապի չմատնվեց ու ապավինեց մեզ, մեր ուժերին: Այդ բարդ ու լարված ժամանակահատվածում, սակայն, մեզ չհաջողվեց լուծում տալ (եւ անավարտ մնացին) բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրների, որոնցից կառանձնացնեի հետեւյալները. կիսատ մնաց Սյունիք-Քաղաքերի տրոլեյբուսի օղակաձեւ գծի, քաղաքի կենտրոնը Շինարարների թաղամասի հետ կապող ճոպանուղու, օդանավակայանի, կոշիկի ֆաբրիկայի, «Սպին», պահածոների գործարանների, թատրոնի, Քաղաքերի մանկական հիվանդանոցի շենքերի, Շիշկերտ գյուղի վերականգնման եւ այլ արտադրական ու սոցիալական նշանակության օբյեկտների կառուցումը: Կիսատ մնացած օբյեկտների թվում կառանձնացնեի ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի (Ն.Ռիժկովի) առաջին տեղակալ Սիլվեսի մոտ՝ Մոսկվայում, քննարկված եւ հավանության արժանացած մի ծրագիր, ըստ որի կկազմակերպեինք մեր տեսակի հանքահարստացնող մեքենայի (ֆլոտմեքենա) արտադրություն Կապանի մեքենաշինական (ավտոնորոգման) գործարանի ընդարձակման բազայի վրա:

– Կոմերիտական, խորհրդային, կուսակցական աշխատանքի քուրաչով անցած Կարեն Մկրտչյանը 1980-90-ականների սահմանագծում հայտնվեց երկու արժեքային համակարգի բախման կիզակետում: Մի կողմից ճանապարհ էր հարթում ազգայինը, մյուս կողմից շարունակվում էր իշխել «ձեռով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական (կոմունիստական)» հիմնադրույթը: Եվ այդ ժամանակ կուսընթացի առաջին քարտուղարը (մինչեւ այսօր իրեն աթեիստ համարող) հանդես է գալիս Գեղամուշի Սբ Դեմիսիան եկեղեցու վերաբացման նախաձեռնությամբ: Նույն կուսընթացի առաջին քարտուղարի նախաձեռնությամբ Կապանում կառուցվում է հուշակոթող՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող: Ինչպե՞ս հասկանալ այդ ամենը՝ արժեքների երկակի ընկալում, աշխարհայացքում տեղի ունեցող փոխակերպում, հասարակության ճնշող մեծամասնության ձգտումներին ընդառաջ գնալ, թե՛... Անկախության տարիներին էլ, երբ կոմունիստական ղեկավարող կուսակցություն չէր, ընդունվեցիք ԳԳԿ շարքերը: Ընդ որում՝ այդ կուսակցության կապանյան կառույցի մեջ, հատկապես ընտրությունների ժամանակ, ակտիվ դեր էր խաղում առայսօր: Գարեգին Նժդեհի կապանյան հուշակոթողի բացման ժամանակ էլ կապանցիների անունից Դուք եք ելույթ ունենում: Ինչպե՞ս հասկանալ նման կտրուկ շրջադարձը:

– Ամեն մի արժեհամակարգ ստեղծվում է ազգային հենքի վրա, եւ յուրաքանչյուր մեծ կամ փոքր գործիչ ի ծնե իր մեջ կրում է ազգային ոգին: Եվ այդ ոգու դրսեւորման աստիճանը կախված է տվյալ անհատից ու արտաքին պայմաններից ու գործոններից: Նախկին հասարակարգում իշխող գաղափարախոսության պայմաններում ազգային ոգին լրացմողի դերում էր հանդես գալիս, իսկ ներկա համակարգում առանցքային դեր ունի: Եվ եթե օրինակ բերեմ Ալեքսանդր Մյասնիկյանին, Արա-



1986թ., Կապան այցելած Կարեն Դեմիրճյանին (ԳԳԿ կենտրոնի առաջին քարտուղար) դիմավորեցին շրջխորհրդի գործկոմի նախագահ Կարեն Մկրտչյանն ու ԳԳԿ շրջկոմի երկրորդ քարտուղար Արամայիս Բաբայանը



1977թ., Ձանգեղուրի պղնձամուլիբդենային կոմբինատի փնտրեն Համլեթ Ոսկանյանն ու կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Կարեն Մկրտչյանը զրույցում են ԽՍՀՄ գունավոր մեդալուրգիայի նախարար Պ. Լոմակոյի հետ



1978թ., ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը Քաջարանի կոմբինատում կուսկոմիտեի քարտուղար Կարեն Մկրտչյանի ուղեկցությամբ

սի հանցյանին, Գրիգոր Հարությունյանին, Սուրեն Թովմասյանին, Յակով Զարոբյանին, Անտոն Քոչինյանին կամ Կարեն Դեմիրճյանին, ապա, կարծում եմ, շատերը համամիտ կլինեն մտքին, որ կոմունիստի հաստատանյան ղեկավարները նախնախնայ ազգային գործիչներ էին: Ինչ վերաբերում է կուսակցության շրջանային կազմակերպությունների ղեկավարներին, ապա... Իմ կյանքի գլխավոր նպա-

տակը (թող մեծամտություն չհամարվի) զարգացած երկիր ունենալն ու նրա արժանի քաղաքացի լինելն է եղել՝ անկախ այն բանից, թե ինչ հասարակարգ է գործել կամ ինչ գաղափարախոսություն է իշխել: Դեռևս արևելքում ինչ համար նշանակալից այն է եղել, թե ես ի՞նչ մասնակցություն կկարողանամ ունենալ այդ ամենին ես ի՞նչ չափով կկարողանամ ներդրել կարողություններս մեր երկրամասի զարգացման, հասարակության (նաեւ ընտանիքիս) բարեկեցության բարձրացման գործում: Եվ հասարակության զարգացման տվյալ փուլի ընձեռած լծակներն աշխատել են հնարավորություններին սահմաններում ծառայեցնել մեր տարածաշրջանի հոգսերի թեթևացմանը: Ինչ վերաբերում է կոմկուսից հետո ԳԳԿ-ին անդամագրվելուն, ապա պիտի ասեն, որ ԳԳԿ-ն, իմ կարծիքով, միակ կուսակցությունն է այսօր, որ ունի քիչ թե շատ ազգային գաղափարախոսություն, ստեղծվել է գործում է Հայաստանում, ձգտում է դառնալ եվրոպական արժեքների կրող, դարձել է Եվրոպայի ժողովրդական կուսակցության անդամ:

– Նոր էպոխային ամսցնելու շրջանում հանրության մեջ, այնուամենայնիվ, մերժողական ակնհայտ վերաբերմունք կար կոմկուսի գործիչների հանդեպ: Գրեթե բոլոր գործիչները, կարծիք, մնացին թանձր ստվերի մեջ: Այդ վերաբերմունքը պահպանվեց անկախության առաջին տասնամյակում: Եվ այդ ամենը Դուք տեսել ու ապրել եք անմամբ: Դիմա... Եթե մի հրաշքով վերադառնար Մախկին հասարակարգը, եւ Դուք էլ վերադառնայիք Ձեր գիտակցական գործունեության մեկնարկային կետը, կյանքի ո՞ր ուղին կնախընտրեիք, ի՞նչը կկրկնեիք, ինչի՞ց կհրաժարվեիք:

– Ի տարբերություն կոմկուսի շատ այլ գործիչների, իմ նկատմամբ շրջապատի վերաբերմունքը յուրովի էր՝ դրական իմաստով (նաեւ ինչի շնորհիվ մնացի Կապանում)՝ կապված ոչ միայն անցած ուղուս, այլ այն իրողության հետ, որ 90-95թթ. եղել են Ազգային ժողովի (Գերագույն խորհրդի) պատգամավոր եւ օրենսդրական ու տնտեսական գործունեությամբ համեստ ներդրում ունեցել անկախացած մեր պետության սկզբնավորման գործում: Ինչ վերաբերում է հարցադրման մյուս մասին՝ կասեմ հետևյալը. երկու համակարգն էլ ունեին-ունեն իրենց դրական եւ բացասական կողմերը: Նախկինում չկար գործազրկություն, աղքատություն, մարդկային փոխհարաբերությունները հենվում էին կամեցողության, հասարակությանը ծառայելու, ընդհանուրին օգտակար լինելու եւ այլ ուղղամիտ սկզբունքների վրա: Ներկայումս բարձր է մարդու կենսագործունեության ազատության աստիճանը, լայն են անհատի ինքնահաստատման, ինքնադրսեւտման հնարավորությունները, նրա ինքնազարգացման դաշտն ու պայմանները եւ այլն: Կարծում եմ՝ ճիշտ կլիներ ոչ թե ամբողջությամբ մերժել, բացասել անցյալը եւ ամեն ինչ սկսել սկզբից ու նորից (ինչպես վարվեցինք 90-ականներին), այլ համարվել նախկինի եւ ներկայի դրականը՝ լրացվելով զարգացած պետությունների փորձով, ու ստեղծվել այնպիսի համակարգ, որ հոգեհարազատ լիներ անցյալ, ներկա եւ ապագա սերունդներին, ու Հայաստանը դառնար ոչ թե արտագաղթի, այլ վերադարձի երկիր:

– Քսան տարվա հեռավորությունից ինչպե՞ս կգնահատեիք նորանկախ Հայաստանի առաջին խորհրդարանի ընտրությունը (1990 թվականին), նաեւ փոքր-ինչ մանրամասնեք Ձեր՝ Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրվելու հանգամանքները (չէ՞ որ այն ժամանակ Կապանի շրջանում, նաեւ ամբողջ հանրապետությունում, գրեթե երկիշխանություն էր), ինչպես եւ Կապանի շրջափակի նախագահ ընտրվելու հնարավորությունը չօգտագործելը:

– 1990-ի խորհրդարանական ընտրությունն, ի տարբերություն հետագա համապետական ընտրությունների, անցել են մրցակցային, ազատ ինքնադրսեւտման մթնոլորտում, ժողովրդավարական սկզբունքներին համահունչ եւ, ինչպես ժողովուրդն է գնահատում ու բնորոշում առայսօր, իսկական ընտրությունների ոգուն եւ ելույթներ համապատասխան: Ինչ վերաբերում է իմ ընտրությանը, ապա նույն ընտրատարածքում պայքարում էին եւս 3 հոգի, որոնցից 2-ը՝ համազգային շարժման ակտիվիստ էին, իսկ երրորդը՝ կին էր,

ով ինքնաբացարկ ներկայացրեց: Արդյունքում՝ ընտրողների 75%-ն ին օգտին քվեարկեց: Կապանի շրջափակի նախագահի ընտրության մասին. իշխանության եկած ԳԳԿ-ի ղեկավարության առաջարկությամբ կարող էի ընտրվել շրջափակի նախագահ եւ նրանց հետ համատեղ աշխատել, եթե հրաժարվեի կոմկուսի անդամությունից: Ես չզնայի ոչ արժանապատիվ այդ «կոմպրոմիսին» եւ առաջարկեցի Կապանի շրջափակի նախագահ ընտրել Գերագույն խորհրդի պատգամավոր Սլավիկ Հայրապետյանին: Ոմանք էլ առաջարկում էին Նորիկ Գևորգյանին թեկնածությունը (ԳԳԿ տեղական գործիչներից էր), բայց իմ առաջարկությամբ նախապատվություն տրվեց:

– Կեց տարի Կապանի շրջափակի գործկոմի նախագահ եւ երեք տարի կուսընկերի առաջին քարտուղարն եք եղել ու լավ գիտեք շրջան կոչված վարչական միավորի կառավարման եւ ուժեղ, եւ թույլ կողմերը: Բայց ահա 17 տարի է, ինչ մեր երկրում վարչական մարզերն են շրջանների փոխարեն մարզեր են, որոնք իրենց մեջ ներառել են մի քանի շրջան, Սյունիքի դեպքում՝ չորս շրջան: Ի՞նչ եք կարծում՝ տարածքների զարգացման տեսակետից վարչական ո՞ր մի բաժանումն է օպտիմալ՝ շրջանային, թե՞ մարզային:

– Մարզային կառույցը, ըստ իս, լիարժեք չի ստեղծվել, ինչի արդյունքում կառավարման այդ ձեւը տարածաշրջանը պատշաճ կառավարելու հնարավորություն չի տալիս: Նախ՝ այն վերաբերում է ստեղծվել՝ հաշվի առնելով եւ աշխարհագրական ու ժողովրդագրական գործոնները, ինչպես եւ տվյալ տարածքի տնտեսական ներուժը, բնակչության սովորույթներն ու ավանդույթները: Միաժամանակ՝ որոշիչ նշանակություն պիտի ունենար տարածքների՝ ինքնապահովման, տնտեսվարարական անցնելու հնարավորությունը: Կարելի է, որ տարածքային կառավարման մարմինները տեղական նշանակության խնդիրներն ինքնուրույն լուծելու հնարավորություն ունենային, ինչը չեն տեսնում: Մարզերի կառուցման համար նշանակալի դեր կունենան նաեւ երկրի բոլոր տարածքների համաչափ զարգացման ծրագրի իրագործումը, ինչը նույնպես տեսանելի է: Երջանայինի համեմատ մարզային կառույցը շատ հարցերում հասանելի չէ մարդկանց եւ հատկապես գյուղական բնակչությանը: Սյունիքի մարզը պետք է կիսել եւ ստեղծել երկու մարզ՝ միմյանց միացնելով հարակից շրջանները: Դրանով տարածքային իշխանությունն ավելի կմոտեցնենք բնակչությանը:

– Անկախության տարիներին Կապանի շրջանի զարգացումն ընթանում է տնտեսության մեկ ուղորտի՝ հանքարդյունաբերության գեղակավ զարգացմամբ: Նախորդ ժամանակներում հանքարդյունաբերությանը զուգահեռ Կապանի տարածքում որոշակի տեղ ունեին գյուղատնտեսությունը, թեթևարդյունաբերությունը, սարքաշինությունը... Ձեր կարծիքն ենք ուզում իմանալ՝ շարունակե՞լ այս ճանապարհը, թե՞ վերանայել Կապանի զարգացման առաջնայնությունները, տնտեսության կառուցվածքը:

– Անհրաժեշտ է վերանայել Կապանի զարգացման առաջնայնությունները եւ տնտեսության կառուցվածքն այն հաշվով, որ տնտեսությունը դառնա բազմաճյուղ, ինչպես նախկինում էր: Պետք է զարգացնել ճյուղերը, որոնք նախկինում կային եւ այսօր էլ հնարավոր է վերականգնել, քանի որ որոշակի արտադրական ներուժ եւ մասնագետներ դեռեւս մնացել են, ու ավելի դյուրին կլիներ վերականգնել դրանք: Խոսքն առաջին հերթին վերաբերում է թեթևարդյունաբերությանը, ինչը կարելի էր նշանակություն կունենա նաեւ կանանց զբաղվածության խնդիրը լուծելու գործում: Պետք է վերականգնել եւ զարգացնել վերամշակման ճյուղը (պահածոներ, մսամթերք, կաթնամթերք, հատապտուղ, միրգ, դեղաբույսեր եւ այլն): Այնուհետեւ՝ ինժեներատար եւ գիտատար արտադրությունը: Դրան պետք է նպաստակառուցել նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցները: Առանձնակի աշխատանք պետք է տանել պոչամբարների պարունակությունը վերամշակող ձեռնարկությունների, հարստացուցիչ ֆաբրիկաների կառուցման ուղղությամբ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի կորզել եւ ստանալ տարբեր մե-

տաղներ ու ներկեր (նոլիբեն, պոլիմե, ոսկի, գուաշ, օքրա եւ այլն): Միաժամանակ, կարծում եմ՝ հնարավոր է նորից վերադառնալ նախկինում՝ Մոսկվայում քննարկված եւ հավանության արժանացած ծրագրի իրագործմանը, ինչի մասին քիչ առաջ նշեցի: Խոսքը Կապանի կոմբինատում երկար տարիներ փորձարկված եւ մեծ առավելություններ ունեցող նոր հանքահարստացնող մեքենաների արտադրության մասին է՝ տեղական ձեռնարկության բազայի վրա:

– Որո՞նք են, ըստ Ձեզ, Կապանի սպառնացող մարտահրավերները, եւ ինչպե՞ս կարող ենք դիմակայել դրանց: Եթե մեր թերթի հրապարակումներին հետևում եք, ապա Կապանի տարածքում գյուղապահպանությունը եւ բնապահպանությունը վտանգված են ամենից շատ, գրեթե բոլոր ոլորտներում շարունակում են իշխել սուտը, ձեւակալությունը, չի նահանջում աղքատությունը...

– Գործազրկությունը, արտագաղթը՝ հատկապես սահմանամերձ գյուղերից, տարածքի տնտեսության միաճյուղ զարգացումը, հեռավորությունն ու կտրվածությունը մարտաքաղաքից եւ այլն: Գյուղապատի ավտոճանապարհի կառուցումը եւ Իրանի հետ երկաթուղային կապի ստեղծումը լուծում կտային մի քանի հիմնախնդիրներ: Ընդ որում՝ կարծում եմ՝ Կապանի եւ Մեղրու շրջաններում ճանապարհաշինության համար տարածքի ընտրությունն այնպես պիտի արվի, որ հետագայում նորից սահմանային պրոբլեմների չբախվենք: Ինչ վերաբերում է սահմանամերձ գյուղերին, ապա դրանք պետք է դիտարկել որպես ռազմավարական տարածքներ՝ այդ ամենից բխող քայլերով:

– Ահա քանի տարի է՝ աշխատում եք «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ում: Այդ ընկերության շուրջ հանրության մեջ իրարամերձ երկու կարծիք է գերիշխում՝ դրական եւ շատ բացասական: Ձեռք ուզում մեր գյուղացու խրճատը դրանց մեջ, ուզում ենք պարզապես իմանալ Ձեր փաստարկված կարծիքն այդ ընկերության դեմ եւ առաքելության մասին:

– Եթե նախկինում Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հիմնականում քաղաքացիներին էր աշխատատեղով ապահովում, ապա ներկայումս այնտեղ աշխատում են նաեւ Կապան քաղաքի եւ մերձակա գյուղերի բնակիչներ: Այնուհետեւ՝ Կապանի ավելի քան 70 կազմակերպություն, որտեղ ընդգրկված է մոտ 2 հազար մարդ, գործընկերային հարաբերություններով կոմբինատից շուրջտարայա աշխատանքային պատվերներ է ստանում: Միաժամանակ՝ կոմբինատի աշխատողների միջին ամսական աշխատավարձը հանրապետության ամենաբարձրերից է: Ընկերությունը համարյա ամեն տարի հանդիսանում է պետության առաջին խոշոր հարկատուներից մեկը (հաճախ՝ առաջինը): Կոմբինատի ֆինանսական միջոցներով ամեն տարի միլիարդավոր դրամի սոցիալական ծրագրեր են իրականացվում մարզի եւ հանրապետության տարբեր քաղաքներում ու գյուղերում: Հարյուրավոր ուսանողներ ու հիվանդներ կոմբինատի միջոցներով սովորում, իրենց առողջությունն են վերականգնում: Կատարածի եւ ժողովրդին օգտակար լինելու մասին թվարկումները կարելի է շարունակել... Եկեք հակառակը մտածենք նաեւ. եթե կոմբինատն այս ծավալով ու շահույթով չաշխատեր կամ կանգներ, ի՞նչ վիճակում կհայտնվեին մարզի եւ հանրապետության հազարավոր ընտանիքներ: Արդյո՞ք դա չէր նպաստի Քաջարան եւ Կապան քաղաքներից ու մերձակա գյուղերից բնակչության արտագաղթին եւ սահմանների թուլացմանը: Ինչ վերաբերում է բացասական կարծիքներին՝ ասեն, որ ման կարծիք ունեցող մարդիկ լիարժեք եւ ճիշտ տեղեկություն չունեն կամ չեն ցանկանում ունենալ կոմբինատի մասին, միգրացիան չեն էլ գիտակցում կոմբինատի տեղն ու դերը երկրի տնտեսական կյանքում: Ըստ իս՝ բացասականը հիմնականում վերաբերում է բնապահպանական խնդիրներին, որի լուծման համար կոմբինատը միլիարդավոր դրամ է ծախսում ամեն տարի՝ ի տարբերություն նախկին ժամանակների: Եվ եթե տարեկան մեկ-երկու անգամ վաթի տեղի ունենում 1977 թվականից շահագործվող եւ 36վ իրականություն ունեցող պղնձարտարում, ապա այն ավելի շատ քաղաքականացվում եւ շահարկվում է... Եվ շահարկողներն ավելի

շատ իրենց անձնական ու սուբյեկտիվ վերաբերմունքն են արտահայտում՝ իրական հանգամանքները հաշվի չառնելով:

– Նոր հասարակարգ, նոր հարաբերություններ... Ձեր պատկերացմամբ որո՞նք պետք է լինեն անկախ Հայաստանի, նոր Հայաստանի քաղաքացու բնորոշ գծերը, ի՞նչ ակնկալիքներ ունեք աճող սերնդից:

– Ազգովի ունենք քաղաքացի դաստիարակելու գերխնդիր: Իսկ մեր ուզած քաղաքացու ձեւավորումը պետք է իրագործվի դպրոցական տարիներից սկսած: Իմ պատկերացումն քաղաքացին պետք է գիտակցի պետական, համընդհանուր շահի առաջնայնությունն ու դրանք ավելի բարձր դասի անձնակազմից, ազգային սկզբունքային հարցերում եւ երկրի համար վճռորոշ պահերին համագործակցի նաեւ իշխանությունների հետ: Քաղաքացին պետք է լինի օրինապահ, հանդուրժող, մեծահոգի, համբերատար, միաժամանակ ունենա ակտիվ դիրքորոշում: Կարելի է նաեւ ընտանիքի դերը:

– Խորհրդային ժամանակներում Կապանն ունեցել է բազմաթիվ ղեկավարներ, որոնց գործունեության շնորհիվ է ձեռք բերվել քաղաքի ու շրջանի ներկայիս կերպը: Ո՞վ է Ձեզ համար եղել ընդօրինակման արժանի ղեկավար, ո՞ւմ եք Ձեզ համար իդեալ համարել, ո՞վ է ամենից շատ ներդրում ունեցել նորոյա Կապանի կառուցման գործում:

– Հայաստանի կոմկուսի Կապանի շրջկոմի՝ 14 տարի պաշտոնավարած 1-ին քարտուղար Ռաֆիկ Մինասյանը եւ Կապանի շինարարական տեխնիկումի նախկին տնօրեն Ավետյանա Թումանյանը, ում մոտ ստացել են աշխատանքային առաջին մկրտությունս: Նորոյա Կապանի կառուցման գործում ամենից շատ գնահատում են Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի դերը: Լինելով հանրաճանաչ տնտեսական գործիչ եւ արտադրության հմուտ կազմակերպիչ, իր ղեկավարած տասը տարվա ընթացքում կոմբինատը դարձրեց համաշխարհային համբավ ունեցող ձեռնարկություն: Աշխատատեղեր չկրճատելով (ընդհակառակը՝ ավելացնելով) այդ ընթացքում կարողացավ շուրջ երկու անգամ ավելացնել արտադրության ծավալները, մեծ չափով բարձրացնել հանքաքարից մետաղների կործանման աստիճանն ու բարելավել արտադրանքի որակը, արտադրությունում ներդրել միջազգային չափանիշներին համապատասխան ամենաառաջավոր տեխնիկա ու տեխնոլոգիաներ: Եզնաժամի տարիներին, ի տարբերություն այլ ձեռնարկությունների ու ճյուղերի ղեկավարների, այնպիսի քաղաքականություն վարեց, որ միայն վերջին երեք տարում ստեղծեց մոտ 300 նոր աշխատատեղ, 35%-ով բարձրացրեց աշխատողների միջին ամսական աշխատավարձը: Կապանում, մարզում, նաեւ ամբողջ հանրապետությունում մեծածավալ ներդրումներ կատարեց ժողովրդի սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ, մասնակցեց Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցմանը: Կապանում ստեղծեց տարբեր բնագավառներում ու նշանակությամբ գործող ձեռնարկություններ, որտեղ աշխատում են հարյուրավոր մարդիկ:

– Ի՞նչն այսօր մեզ չի հերթում կամ ի՞նչն է մեր ներկա ընթացքում հատկապես պակասում:

– Մեզ առաջին հերթին պակասում են մարդկային ճիշտ փոխհարաբերությունները, հանդուրժողականությունը, կամեցողությունը...

– Ի՞նչ զգացողություն եք ունենում, երբ հիշում եք, որ Ձեր գործունեության մեջ նաեւ անավարտ գործեր են եղել, չիրականացված մտադրություններ:

– Ափսոսում եմ, որ իմ ներուժը, հնարավորությունները լավագույնս չկարողացա օգտագործել շրջանի առջեւ ծառայած հիմնախնդիրները լուծելու գործում:

– Ո՞րն եք համարում Ձեր հետագա առաքելությունը, ի՞նչ ծրագրեր ունեք, չէ՞ որ ընդամենը 65 տարեկան եք, կառավարման ոլորտում լուրջ փորձ ունեք:

– Հնարավորություններին սահմաններում այսուհետ եւս կնպաստեն մեր երկրամասի, իմ բնօրրան Կապանի ու Քաջարանի հետագա զարգացմանը:

Հարցազրույցը՝
ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԵՎ
ԱՂԱՎԿԻ ՆՎԱՍԱՐԳՅԱՆԻ

Ժամանակակիցները, գործընկերները

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՍԻՆ. Կարծիքներ, բնութագրականներ, հիշողություններ

ԷՐԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գեներալ-լեյտենանտ, Արարատի մարզպետ



Կարեն Մկրտչյանին ճանաչում եմ 1970 թվականից, երբ աշխատում էի Քաջարում: Այն ժամանակ ինքը Քաջարում շինարարական տեխնիկոսի փոխտնօրենն էր՝ ուսումնական հարցերով, լուրջ հեղինակություն ուներ Քաջարում, սկզբունքային մարդու համբավ: Հետագայում պատասխանատու այլ պաշտոններ զբաղեցրեց Կապանում՝ շրջանի մասշտաբով: 1983 թվականին արդեն Կապանի շրջանային խորհրդի նախագահն էր, իսկ 1988-ին՝ կոմկուսի Կապանի շրջկոմի առաջին քարտուղարը, ասել է թե՛ Կապանի շրջանի ղեկավարը: Ի դեպ, Կապանի շրջխորհրդի գործկոմի միակ նախագահն էր, որ հետագայում դարձավ նույն շրջանի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար: Կարեն Մկրտչյանի մասին կարելի է բնութագրական եւ դրվատանքի շատ խոսքեր ասել: Բայց ուզում եմ կանգ առնել 1980-ականների երկրորդ կեսին նրա գործունեության առանձին դրվագների վրա: Նախ՝ այդ օրերի համար շատ համարձակ մի քայլ կատարեց: Լինելով շրջխորհրդի գործկոմի նախագահ՝ ընդդիմացավ Կուբաթի-Կապան նոր ճանապարհի կառուցմանը (Դավիթբեկի վարչական տարածքով): Նա գիտեր, անշուշտ, թե ինչ հետեւանք կարող է ունենալ այդ դիմադրությունն իր անձնական կարիերայի համար, բայց հասկանում էր նաեւ, թե այդ ճանապարհի կառուցմամբ ինչ բացասական զարգացումների հնարավորություն կստեղծվեր Կապանի համար, որի բնակչության 22-24%-ն արդեւաբան էր: Արդեւաբանական կողմը բողոքեց մինչեւ Մոսկվա, բայց նա կարողացավ հանրապետության ղեկավարությանը լուրջ փաստարկներով համոզել իր դիրքորոշման ճշմարտացիության մեջ:

Էքստրենալ իրավիճակներում կողմնորոշվելու եւ սթափ որոշումներ կայացնելու օժտվածություն ուներ: Արցախյան հակամարտության հենց սկզբում Կապանը հայտնվեց ոչ սովորական իրավիճակում՝ հաղորդակցության ուղիների առումով: Սկզբից՝ երկաթուղին, որով իրականացվում էր Կապանի (նաեւ Գորիսի, Մեղրու) բեռնափոխադրումների զգալի մասը, հայտնվեց շրջափակման մեջ: Մարտական գործողությունների պատճառով որոշ ժամանակ չէր կարող գործել Գորիս-Կապան ավտոմայրուղին: Խիստ վտանգավոր էր դարձել Կապանից Ագարակ, Եղվարդ, Ուժանիս ձգվող ավտոճանապարհը: Հենց նրա նախաձեռնությամբ վերին Գյողաբլու գյուղով շրջկենտրոնը կապվեց այդ գյուղերի հետ: Նրա նախաձեռնությամբ Կապանն այլընտրանքային ճանապարհով միացավ Գորիսին. նկատի ունեն Աղվանի-Տաթև ճանապարհը, որ մեկ տարի եւ ավելի ժամանակ փաստորեն (Շուռնուխի հատվածում ստեղծված բարդ իրավիճակում) Մեղրու եւ Կապանի շրջանները կապեց Գորիս-Երեւան ավտոմայրուղուն:

Ազգային զարթոնքի ժամանակ, Արցախյան հակամարտության օրերին, անկեղծ լինեմ, կուսակցության շրջկոմներն աստիճանաբար կորցնում էին երբեմնի ղեկավար դերն ու ազդեցությունը: Բայց Կարեն Մկրտչյանը, նաեւ իր անձնական հեղինակության շնորհիվ, իրավիճակին տիրապետում էր, կառավարում, ուղղորդում գործընթացները: Նաեւ նրա շնորհիվ էր, որ շրջանի տարածքում գործող բոլոր քաղաքական ուժերի, ինքնապաշտպանական միավորումների միջեւ, հատկապես սկզբունքային եւ առանցքային հարցերում, հիմնականում միասնություն էր տիրում: 1990 թվականից եւ Կապանի ՆԳ բաժնի պետն էի, 1991թ. ապրիլից՝ նաեւ Կապանի արտակարգ դրության շրջանի պարետը: Ամեն ինչ անում էր, որ մեր, ինչպես եւ ինքնապաշտպանական ջոկատների կողմից բարձրացված հարցերը հնարավորինս լուծում ստանան:

Պատերազմական ժամանակին բնորոշ այլ իրավիճակներ էլ էին առաջանում: Արդեւաբանցիները Եղվարդից 128 խոշոր եղջերավոր անասուն էին գողացել: Նա վճռորոշ դերակատարություն ունեցավ դրանք հետ բերելու գործում: Եվ մասնաշատ էաիզողներ...

Քաղաքական գործչին, նյութական այրին բնորոշ պահվածք էր նրա գործելակերպն այն օրերին, երբ արդեւաբանցիները Կապանից ու մերձակա գյուղերից հեռանում էին: Խոսքը 15 հազար մարդու մասին էր: Նա կարողացավ գործընթացը չափավորության, զսպվածության, միմյանց հանդուրժելու հուն մտցնել: Կարեն Մկրտչյանը նաեւ մարդկային բարձր հատկանիշների կրող է: Մաքուր, ազնիվ, անկաշառ ղեկավար էր: Անզան հանրահավաքներում՝ Կապանում այդ ժամանակ պարբերաբար տեղի ունեցող, նրա հասցեին զուսպ էին արտահայտվում: Ինքն էլ իրենից կախված ամեն ինչ անում էր, որ քաղաքական հոսանքների, ինքնապաշտպանական ջոկատների միջեւ բախումներ չլինեին:

Կապանի տարածքի փորձառու, ինտելեկտուալ կարգերից է, որից առայսօր կարելի է շատ բան սովորել: Նա դեռ ասելիք ունի, նա դեռ պահում էր իր Կապանին: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ջերմ, ընկերական հարաբերությունների մեջ եմ նրա հետ: Եվ բարձր եմ գնահատում այդ ընկերությունը, նրան ցանկանում հաջողություններ ու ընտանեկան երջանկություն:

ՇՅՈՐՍ ԴԱԿԹՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր 1990-95թթ., «խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր 1988-91թթ., բանասիրական գիտությունների դոկտոր, «Համո Սահյան ԳՄԿ» ՀԿ նախագահ



Կապանը Այունիքի այն առանձնահատուկ շրջանն էր, որտեղ խոշոր արդյունաբերության կողքին կարող էին

մարել շրջանի 49 գյուղ: Հիշում եմ, որ այդ երեւույթը կամխելու ամենամեծ շահագրգիռը եղավ Կարեն Մկրտչյանը՝ Կապանի այն ժամանակվա շրջխորհրդի գործկոմի նախագահը: Հասավ նրան, որ հանրապետության կառավարությունը որոշում կայացրեց, որպեսզի քաղաքաբնակների գյուղերի տարածքում տնամերձ հողամասեր հատկացվեն:

Այդպես ստեղծվեցին այգեգործական ընկերություններ, որոնց կանոնադրությունը հաստատեց կառավարության նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանը: Այդ նախաձեռնության շնորհիվ 1986-91թթ. բազմաթիվ կապանցիներ իրենց ծննդավայրում տներ կառուցեցին, կապվեցին գյուղերի հետ եւ գյուղաբնակներին օգնեցին սոցիալական ու տնտեսական շատ հարցերում: Կարեն Մկրտչյանի նախաձեռնությամբ եւս մի կարեւոր քայլ կատարվեց, երբ սակավաբնակ գյուղերում իրար միացան դպրոցներն ու մանկապարտեզները: Այլ պարագայում դրանք պիտի փակվեին: Մինչդեռ դառնալով մեկ միավոր, հնարավորություն ստեղծվեց պահպանել ոչ միայն մանկական տարիքի երեխաների կրթության եւ դաստիարակության գործը, այլ ստեղծել նաեւ մանկավարժական կայուն կոլեկտիվներ: Ականատես եմ եղել, թե ինչպիսի ծաղկում էին ապրում Լեռնածորի, Ծավի, Ագարակի, Դավիթբեկի եւ մյուս դպրոց-մանկապարտեզները:

Երբ «խորհրդային Հայաստան» օրաթերթի գլխավոր խմբագիրն էի, Կարեն Մկրտչյանը կուսընկերի առաջին քարտուղարն էր: Հաճախ էր ինձ հրավիրում Կապան ցույց տալու, թե ինչպիսի միջոցառումներ է իրականացնում ոչ միայն արտադրության ծավալները չկրճատելու, այլ նաեւ քաղաքական մթնոլորտը դրական լիցքերով պահելու ուղղությամբ:

Չէր մոռացվում նաեւ հոգեւոր ուղորտը: Քանի՜-քանի՜ հանդիպումներ եմ եղել Կապանում Հրանտ Մաթեոսյանի, Սոս Սարգսյանի, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի եւ ուրիշների հետ:

Անկեղծ ասած, շարժման տարիներին Կարեն Մկրտչյանը զարմում էր երկու ջրաղացքարի արանքում: Ազգային կազմով բավականին խայտաբղետ Կապանը, հարեւան թշնամի պետության հետ իրար մեջ միսրված սահմանների առկայությունը եւ սկսվող պատերազմի ուրվականը շրջանի ղեկավարին չէին վախեցնում:

Դժվարն առջեւում էր, եւ կապանցի ցույց տվեց, որ հազարամյակներ շարունակ իր հողի վրա լինելու հավատամքը չի փոխել:

Չեմ կարող չընդգծել, որ Կարեն Մկրտչյանը նորահայտ իշխանությունների հետ առնական մեջ գնաց՝ անխուսափելի ցնցումներից չհեռու մնալու նպատակով: Աշխատանքը թողնելուց հետո, երբ միայն ԱԺ պատգամավոր էր, պայմանավորվեց նրանց հետ, որ ինքը զբաղվելու է հանրապետական մակարդակի խնդիրներով: Հասավ այն բանին, որ հրավիրվեց կառավարության արտահերթ միստ, որտեղ քննարկվեցին Կապանի վերաբերող հրատապ հարցերը: Նիստի զեկուցողն ինքն էր: Այդպես ընդունվեց ոչ միայն որոշում, այլ նաեւ կատարման հսկողությունը դրվեց պետական նախարարի վրա: Իսկ խնդիրներն ավելի քան հրատապ էին՝ սահմանների պաշտպանություն, խմելու ջրի անվտանգություն, բնակչության սննդի ապահովում, սոցիալական եւ տնտեսական խնդիրների վճռում:

Կարող եմ վստահաբար ասել, որ Կարեն Մկրտչյանն իր ժողովրդի հավատավոր զավակն է, նրա լուսավոր երազանքների կրողը:

ՈԱԶՄԻԿ ՂԱԶՈՐՆԱՆ

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար



Սեր օրերում դուրիմ չէ խոսել պետական, թեկուզեւ նախկին, պաշտոնյաների մասին, որովհետեւ հանրության մի սովոր մասի շրջանում վերջիններիս հանդեպ վերապահում կա, եւ ոչ մեկն այս առումով բացառություն չէ: Խոսքն այս պարագայում վերաբերում է Կարեն Մկրտչյան մարդուն եւ խորհրդային, կուսակցական գործչին, ում հետ ծակատազրի բերումով հնարավորություն եմ ունեցել շփվել եւ աշխատել երկար տարիներ, որոնց ընթացքում մեր հարաբերությունները զուտ աշխատանքայինից վերածվել են ընկերականի: Նա իր գործունեությամբ միշտ էլ պահպանել է Կապանի շրջանի ղեկավարի արժանապատվությունը եւ վաստակել հասարակության հարգանքն ու համակրանքը:

Նրա մարդկային հատկանիշներից կառաձանցանքի սկզբունքայինությունը, անմիջականությունը, նպատակասլացությունը, սկսած գործն ավարտին հասցնելու հաստատականությունը: Խստապահանջ էր՝ ոչ միայն երեխաների, այլեւ իր նկատմամբ: Կազմակերպչական աշխատանքի փորձի հսկայական պաշար ունենալով՝ կարողանում էր մարդկանց համախմբել, ուղղորդել եւ անպայմանորեն հասնել ծառայած խնդիրների լուծմանը:

Աշխատելու տարիներին իր վարքով երբեք տեղիք չի տվել փոքր-ինչ կասկածելու իր ազնվության մեջ: Գործին ու շրջապատին նվիրված, սրտացավ ու հոգատար անձնավորություն. այդպես է մինչեւ ինձ, ու նրա հետ առնչվելը մեր օրերում էլ հաճելի է: Միշտ կարողացել է ըմբռնել շրջապատի ու բարեկամի, ընկերոջ ու հարեւանի հոգան ու ցավը, օգնել նրանց, կիսել տխրությունը եւ ուրախությունը:

Կարեն Սամսոնիչ ղեկավարի օրինակը, կարծում եմ, ուսանելի է նաեւ նոր սերնդի ղեկավարների համար:

Ղեկավարի եւ պարզապես մարդկային որակներից կառանձնացնելի հատկապես նրա աշխատասիրությունն ու նվիրվածությունը գործին, աշխատող մարդուն արժեւորելու եւ նրան գորավիզ լինելու ունակությունը. երբեւ չի ձգտել հեղինակություն՝ ժամազին հնարքներով եւ երբեք չի տրվել բոլորին հաճող լինելու գայթակղությանը՝ պահպանելով սեփական խոսքի արժեքն ու մարդու՝ իրեն բնորոշ տեսակը:

Տարիների հեռվից այսօր էլ տեսանելի է, որ կուսակցական բարձրաստիճան պաշտոնյաների լիազորություններն այն ժամանակ թույլ էին տալիս նաեւ ազգային խնդիրներ լուծել, կուսակցական իշխանությունը ծառայեցնել ազգային մտահոգությունների լուծմանը, եթե, իհարկե, ինքը ունեիր դրանք՝ որպես նպատակ:

Այս առումով այն ժամանակվա կուսակցական գործչներից շատերին պետք է դիտարկել ոչ թե պարզապես ֆունկցիոներներ, այլեւ պետական, ինչն էլ՝ ազգային գործիչներ: Կարեն Մկրտչյանի կերպարն ամբողջությամբ տեղավորվում է այդ համատեքստում:

Արտաքննապես խստաբարո էր զգացմունքներում զուսպ մարդն իրականում մեծ սիրտ ու շատ ջերմ վերաբերմունք ունի մարդկանց նկատմամբ:

ԱՐԱՐԱՏ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ճարտարագիտական եւ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիաների իսկական անդամ, Երեւանի պետական համալսարանի

Ժամանակակի մամուլի էջերից



1985թ., ՀԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության նախագահ Բաբկեն Սարկիսովը Կապանում

Լեռները սիրում են ուժեղներին

«Գրական թերթի» թղթակցի գրույցը կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Կարեն Մկրտչյանի հետ (տպագրվում է կրճատումներով)

– Ի՞նձ համձնարարել են մեր գրույցի ընթացքում շոշափել Ղափանի երկաթուղային առեղծվածը, բայց ես չգիտեմ, թե ինչ բան է դա:

Կ.Մ. – Տանջալի, մղձավանջային մի երեւոյթ է, սկսվել է 1932թ., եւ չգիտեմ, թե մինչեւ երբ է շարունակվելու: Ղափանն աշխարհի հետ իր կապերն իրականացնում է Աղբրեջանի երկաթուղային վարչությանը պատկանող Սինջեւան-Ջանգելան-Ղափան երկաթգծի միջոցով, որը մեր շրջանի ամենացավալի առանձնահատկությունն է: Վիճակը պատկերացնելու համար բավական է հիշել, որ մեր բեռնափոխադրումների 95 տոկոսը կատարվում է երկաթուղու միջոցով: Ղափանի բնակչության կենսապահովման եւ ժողովրդական տնտեսության կարիքների համար ամեն օր պետք է ստանանք շուրջ 2200տ բեռ, այդ թվում՝ 70տ սննդամթերք եւ 120տ վառելիք: Ղափանից մինչեւ Երեւան 320կմ է, հաշվեցեք, թե քանի՞ ավտոմեքենա, որքա՞ն ժամանակ է պետք թեկուզ միայն սննդամթերքն ու վառելիքը տեղափոխելու համար: Չմոռանանք նաեւ, որ ձմռանը մեր լեռնային միակ ճանապարհը հաճախ փակվում է: Ստեղծվում է անելանելի վիճակ: Ղափանցիներն այս պայմաններում են ապրել ու աշխատել աղբրեջանական շրջափակման ամբողջ ընթացքում եւ չեն տրտնջացել: Շրջափակման կիսատ-պռատ վերացումով խնդիրը չի կարող լուծված համարվել, քանի դեռ կա, այսպես ասած, վերին հանդուրժողականությունը, այդ բանը միշտ կարող

է կրկնվել: Մտածում ենք հետագայի մասին, ուղիներ ենք փնտրում, բայց վիճակը հիմնավորապես կարգավորելու հնարավորություններն այնքան էլ մեծ չեն: Ղափանցիներ ենք գործուղել ուսումնարան, որպեսզի դրսից մեզ մոտ աշխատանքի եկող աղբրեջանցի երկաթուղայինների անձնակազմը փոխարինվի հայերով, բայց դա շատ բան չի կարող տալ: Առավել հուսալի ելքի մասին հաղորդել ենք հանրապետության ղեկավարներին: Ելնելով Ղափան-Երեւան ավտոճանապարհի դժվարամատչելիությունից եւ վտանգավորությունից, խնդրում ենք արագացնել Ղափան-Գորիս-Սիսիան ոչ սահմանափակ նոր ավտոճանապարհի նախագծման եւ կառուցման աշխատանքները, որի շինարարությունը Ղափանի հատվածում արդեն սկսված է:

– Մի՞թե անպայման շրջափակում պետք է լիներ, որ մտածեիք այդ մասին: Դեկավար՝ նշանակում է առաջնորդ, լավ առաջնորդը պարտավոր է կանխատեսել այդ բոլոր քաղաքական ու տնտեսական վտանգները, որ կարող են ծառանալ իր ժողովրդի դեմ: Խոսքս կոնկրետ Ձեր անձին չի ուղղված, Դուք նոր եք ընտրվել շրջկոմի առաջին քարտուղար:

Կ.Մ. – Բայց դրանից առաջ յոթ տարի շրջգործկոմի նախագահ եմ եղել: Այդ մեղադրանքը ոչ միայն Ղափանին է վերաբերում, այլեւ Հայաստանի բոլոր սահմանամերձ շրջաններին: Այն բոլորիս է ուղղված:

– Շարունակենք մեր խոսքը Ղափանի եւ նրա ցավերի մասին: Ղափան. մենք

գիտենք նրա պատմական անցյալը, գիտենք, որ Հայաստանի խոշոր արդյունաբերական կենտրոններից է, Երեւանից իր հեռավորությամբ զիջում է միայն Մեղրուն...

Կ.Մ. – Շրջանի 51 բնակավայրում (Ղափան եւ Քաջարան քաղաքներով) ապրում է ավելի քան 56 հազար մարդ: Ունենք արդյունաբերական 20 ձեռնարկություն, որոնք տարեկան թողարկում են 180 մլն ռուբլու արտադրանք, շինարարական յոթ կազմակերպության միջոցով ամեն տարի կատարվում են 35 մլն ռուբլու շինմունտա-ժային աշխատանքներ: 24 գյուղատնտեսական կազմակերպության ընդհանուր համախառն արտադրանքի ծավալը մեկ տարում կազմում է 13 մլն ռուբլի...

– Նույն տարածքում, ինչպես կյանքն է ցույց տալիս, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը հավասար իշխանություն չեն ունենում: Որպես օրենք, գյուղը խեղճանում է, նրա աշխատուժը հոսում է դեպի գործարան ու կոմբինատ, որտեղ կա բարձր աշխատավարձ, քաղաքային կամ քաղաքատիպ կենցաղ, մեծ հանրույթի բովանդակալից առօրյա: Այս երեւոյթը բարձրաձայն չի խրախուսվում, բայց չի էլ դատապարտվում: Որովհետեւ... պղինձն ու կարտոֆիլը համարժեք չեն: Գյուղը դատարկվում է, եւ մեղավորը միայն արդյունաբերությունը չէ: Խոստ հնձելն ամենածանր տղամարդկային աշխատանքն է, 1հա խոտ հնձելու եւ հավաքելու համար մարդուց պահանջվում է առնվազն երեք օր, իսկ այն վարձը, որ ստանում է այդ տաժանակրության համար, կոմբինատում կարող է վաստակել մեկ օրում: Կոմբինատն էլ չլինի՝ խոսքս է գնալու, եւ դատարկվող գյուղի համար միեւնույն է՝ իր բնակիչն ընդամենը Ղափան է հասնում, թե՛ Կրասնոդարի երկրամաս: Անտերացած հողի համար դա ոչ մի նշանակություն չունի: Խոսենք ձեր գյուղերի վիճակի մասին:

Կ.Մ. – Ունենք 49 գյուղ, որտեղ ապրում է շրջանի բնակչության... հազիվ 10 տոկոսը: Գյուղաբնակների միջին տարիքը... 55 է:

– Գուցե չչարունակե՞նք...

Կ.Մ. – Շարունակենք. սասելու բան կա: Երեք դատարկված գյուղ ունեինք դեռեւս մինչեւ այն օրերը, երբ սկսվեց Աղբրեջանում ապրող հայերի բռնի արտագաղթը: Հետո աղբրեջանցիները հեռացան Ղափանից ու դատարկվեց եւս 22 գյուղ: Եկան ավելի քան 5 հազար գաղթական հայեր, եւ այդ գյուղերից 13-ում կյանքը շարունակվեց: Նախկինում դատարկված Շիշկերտ գյուղը պետականորեն վերականգնվում է, այսօր մեզ մտահոգում է մնացած 11 գյուղի ճակատագիրը:

– Տասնմեկ դատարկ գյուղ, բնակչության միջին տարիքը՝ 55, Հայաստանի այս տարածքում, ուրեմն, կշեռքի մտադիր է հողի ճակատագիրը ընդհանրապես:

Կ.Մ. – Այո: Գյուղատնտեսության եւ գյուղապահպանության խնդիրը մեր ամենացավոտ կողմն է, արդյունաբերությունը շահագրգիռ հոգածուններ շատ ունի, մի քիչ դանդաղ, մի քիչ արագ՝ գնում է իր ճանապարհով: Ձեռքներս ծալած-մտած չենք, մտածում ենք գյուղի մասին, անում ենք, ինչ հնարավոր է: Այգեգործական ընկերություններ ենք հիմնում ԸՍՏ ԳՅՈՒՂԵՐԻ սկզբունքով, այսինքն եթե Ղափանի կոմբինատի աշխատողը դատարկված Փուխրուտ գյուղացի է, նրան հողամաս ենք հատկացնում այդ գյուղում: Մի շարք ձեռնարկություններ փայտիթրական հիմունքներով անասուն են պահում, որը շահավետ է թե՛ իրենց, թե՛ գյուղերի համար:

– Բայց մի՞թե մնան միջոցներով հնարավոր է գյուղ պահպանել, առավել եւս՝ վերականգնել:

Կ.Մ. – Իրականացվում են նաեւ մի շարք սոցիալ-տնտեսական բարեփոխումներ: Ուրիշ ի՞նչ կարող ենք անել, եթե կան ավելի խելոջ առաջարկություններ՝ խնդրեմ, սիրով կընդունենք:

– Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում Արմյանի շրջխորհրդի գործկոմի նախագահը խոսեց այն մասին, որ «իշխանությունը՝ սովետներին» հիմ կարգախոսը մեզանում կյանքի է կոչվում զուտ ձեւակառուցում, որ ամեն տեղ խորհուրդները շարունակում են մնալ կուսակցական կոմիտեների իլու կամակատարող գրկված ոչ միայն ղեկավարելու իրավունքից, այլեւ տարրական ինքնուրույնություն-Շարունակությունը՝ էջ 8

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՍԻՆ. Կարծիքներ, բնութագրականներ, հիշողություններ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ, ԳՈՐԾԵՆԿԵՐՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Մակ, համառ բանակցություններ էր վարում աղբրեջանական կողմի հետ, ամեն քայլի դիմում, որ սահմանամերձի բնակչությունը կարողանա ապրել հանգիստ ու խաղաղ պայմաններում: Հենց իր աշխատասիրության, գիտելիքների շնորհիվ է, որ տեւական ժամանակ գեղեցիկ է այրեքան պատասխանատու պաշտոններ, որ սիրված ու հարգված ղեկավար է եղել կապանցիների համար:

Նրա ղեկավարման տարիներին շրջանում զարգացում ապրեցին գյուղատնտեսությունը եւ հատկապես անասնապահությունը: Արտասահմանից կաթնատու կովեր բերեց, բարելավեց անասունների ցեղային կազմը եւ կաթի արտադրության կտրուկ աճ ապահովեց: Ներդրեց նաեւ մեքենայական կիթը, այդ թվում՝ յայլաղներում: Խնդիր չկար գյուղմթերքի իրացման հետ կապված: Պետությունն ամեն ինչ անում էր, որ գյուղացու բերքը դաշտում չփչանա, ժամանակին իրացվի:

ՈՒՖԱՅԵԼ ԱՄՐՅԱԼ

Կապանի վաշտի հրամանատար 1990-93թթ.



Կարեն Մկրտչյանին ճանաչում եմ 1989 թվականից: Երկրի վիճակը ծանր էր, մեր թշնամին ոչ մի կերպ չէր նահանջում, ամենուր կրակոցներ էին հնչում, մարդիկ ահաբեկված ու վախեցած էին: Ստացվեց այնպես, որ մեր տղաներից մի քանիսը գերի ընկան, եւ Կարեն Մկրտչյանը միայնակ՝ վտանգելով իր կյանքը, գնաց հակառակորդի հետ բանակցությունների՝ տղաներին ազատելու համար: Իր քաղաքի, իր հայրենի երկրամասի նվիրյալն էր: Պատերազմի ընթացքում փակվեց Կապան-Գորիս ավտոմայրուղին, որը դարձել էր Կարեն Մկրտչյանի գլխավոր մտահոգություններից մեկը: Գրեթե ամեն օր այդ հարցը քննարկում էր տարբեր պաշտոնյաների հետ եւ նշում, որ ճանապարհի հարցն առաջնային է, պետք է անհապաղ լուծում գտնել: Երկար մտորումներից հետո որոշվեց կառուցել Աղվանի-Տաթև ավտոճանապարհը, որով կապ ապահովվեց Գորիս-Երեւան մայրուղու հետ:

Կարեն Մկրտչյանը Կապանի շրջանը ղեկավարել է մի ժամանակաշրջանում, երբ առկա էին բազմաթիվ խնդիրներ, երբ մարդիկ կյանքի ու սահվան կռիվ էին տալիս: Երկաթուղու մեքենավարներն աղբրեջանցիներ էին, ովքեր գնացքները վարում էին մինչեւ Սինջեւան կայարան եւ իրաժարվում Կապան ուղարկված բեռները տեղ հասցնել: Կարեն Մկրտչյանը որոշեց մի քանի հոգու (հայերից) ուղարկել դասընթացների, որպեսզի նրանք գնացքները վարեն եւ հասցնեն Հայաստան:

Նրան հարգում ու սիրում ենք նաեւ աշխատասիրության համար:



1989թ., ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ի. Սիլևանը (աջից՝ 3-րդը) կուսաշրջկոմի առաջին քարտուղար Կարեն Մկրտչյանի կողմից հրավիրվել էր Կապան: Նրան ուղեկցում էին ԳԿԿ կենտրոնի քարտուղար Սարգսյ Սերոբյանը եւ ՀԽՍՀ գունավոր մեդալուրագիայի վարչության պետ Ալբերտ Աղիբեկյանը

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Կարեն Սյրպյանի պաշտոնավարման շրջանում տեղի ունեցած

- 1975-76թթ. սկսեցին կառուցվել շինարարական տեխնիկոնի ուսումնական, ուսումնաարտադրական մասնաճյուղերը եւ մարզադահլիճը:
- 1984թ. սկսվեցին Գեղի ջրամբարի կառուցման աշխատանքները: Իսկ մինչ այդ կառուցվող ջրամբարի տարածքից տեղահանվեցին աղբեղանական գյուղերը եւ գերեզմանոցը:
- 1984-88թթ. Կապանում շահագործման հանձնվեցին կենցաղի տունը, կոլտնտեսային փակ շուկան, զագսի շենքը (շրջգործկոմի միջոցներով):
- 1986թ. Աղբեղանից Կապանի շրջանին վերադարձվեց 1200հա հողատարածք:
- 1986-87թթ. սկսվեցին Շիշկերտ գյուղի վերականգնումը, Ներքին Հանդ գյուղի վերաբնակեցումը (1988թ. երկրաշարժի պատճառով վնասների փոխհատուցումից հետո):
- Առաջին անգամ Կապանի շրջանի ամսանապահության մեջ ներդրվեց մեքենայական կիթ: Յալալներում անցկացվեցին տասնյակ կիլոմետրերով ավտոճանապարհներ եւ էլեկտրական գծեր, կառուցվեցին կացարաններ, ջրիմուղներ:
- Գյուղական վայրերում շարք մտան տասնյակ բնակելի շենքեր, գյուղխորհրդի վարչական շենքեր, ուսուցչի եւ մշակույթի տներ: Վերանորոգվեցին բոլոր գյուղերի կրթամշակութային օջախները, բուժկետերը, սոցիալական եւ մշակութային օբյեկտներում անցկացվեցին լոկալ ջեռուցման համակարգեր: Համեմատաբար մեծ բնակչություն ունեցող գյուղերում գործարկվեցին Կապանի արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր:
- 1986թ. Ղափանի շրջանում բացվեցին դպրոց-մանկապարտեզներ (հանրապետությունում առաջին անգամ):
- Գյուղական բնակավայրերին պատկանող հողատարածքներում քաղաքաբնակների հատկացվեցին հողամասեր, եւ թույլատրվեց կառուցել անհատական տներ: Այդ նպատակով մշակվեց այգեգործական ընկերությունների նոր կամուրջները, որը հաստատվեց կառավարությունում:
- 1986թ. հանրապետությունում առաջինը ստեղծվեց շրջիկ համակարգչային դասարան, որի միջոցով ինժեներատիկա եւ ուսուցանվում գյուղական դպրոցների աշակերտներին:
- 1989թ. սկսվեցին եւ շարունակվեցին կոնդենսատորների գործարանի, կոշիկի ֆաբրիկայի նոր մասնաճյուղի եւ պահածոների գործարանի շինարարությունները:
- 1989թ. սկսվեց հացի գործարան-խանութի կառուցումը Շինարարների թաղամասում:
- 1989թ. սկսվեց ավտոտեխսպասարկման նոր կայանի շինարարությունը, որտեղ պիտի վաճառվեին նաեւ ռեզինին հատկացվող «ժիգուլի» մակնիշի ավտոմեքենաներ:
- 1989թ. սկսվեցին խմելու ջրի օրվա կարգավորման ջրամբարի կառուցումը Ղափի Բեկ եւ Սյունիք թաղամասերում, Քաջարանի ջրատարի անցկացումը:
- 1989թ. կառուցվեցին հետիոտնային կամուրջներ Հունան Ավետիսյան փողոցում, Ղափի Բեկ եւ Բաղաբերդ թաղամասերում:
- 1989թ. սկսվեց Ղափիթեկ գյուղի ջրամբարից սնվող ոռոգման ցանցի կառուցումը: Ղափան քաղաքում շահագործման հանձնվեց 1000տ տարողությամբ պտուղ-բանջարեղենի պահեստարանը:
- 1989թ. վերաբացվեցին Ղափան-Սոչի, Ղափան-Ստեփանակերտ ավիաերթուղիները:

- 1989թ. Ղափան քաղաքում շահագործման հանձնվեց 500 եւ 100 համարներով երկու հեռախոսակայան: Գործարկվեց Ղափան-Քաջարան ավտոմատ հեռախոսագիծը: Սկսվեց կապի բաժանմունքի նոր մասնաճյուղի շինարարությունը:
- 1989թ. ստեղծվեց միջշրջանային ավտոբուսային նոր բաժանմունք:
- 1989թ. Կապանում բացվեց պատկերասրահ:
- 1989թ. շահագործման հանձնվեց ստոմատոլոգիական պոլիկլինիկան: Սկսվեց քաղաքի փակ լողավազանի շինարարությունը: Մոսկվայում սկսվեց օղակաձեւ տրոլեյբուսային երթուղիների անցկացման նախագծումը: Դրան զուգընթաց տեղական ուժերով սկսվեց Ողջի գետի աջափնյա՝ Գր.Արզումանյան փողոցի լայնացման աշխատանքը:
- 1990թ. բացվեց Մոսկվայի քաղաքի խորհրդի գործկոմի «Սեղպրոնկտուրիմետր» միավորման Հայաստանի տնտեսավարկային տեղամասը (Կապանում), որը պիտի արտադրեր արհեստական մարմարի սալիկներ եւ բժշկական սարքավորումներ (սրսիչներ):
- 1989թ. սոցիալական օբյեկտների նախագծման աշխատանքները Կապանում իրականացվելու նպատակով բացվեց «Հայկոմուննախագիծ» ինստիտուտի մասնաճյուղը: Քաջարանում բացվեց «Ձանգեզուր» արտադրական միավորման մասնաճյուղը:
- 1989թ. շրջանում ոռոգման ցանցերի կառուցման նպատակով ստեղծվեց «Հայգիտրոնի» տնտեսավարկային տեղամասը:
- 1989թ. առողջապահական հիմնարկների նորոգման նպատակով ստեղծվեց ՀԽՍՀ առողջապահության նախարարության շինվարչության զոնալ տեղամասը:
- 1990թ. բացվեց Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ցերեկային բաժանմունքը, որը դարձավ ինստիտուտի Կապանի մասնաճյուղի հիմնադրման հիմքը:
- 1990թ. Կապանում բացվեց Երեւանի հրուշակեղենի եւ մակարոնի գործարանի տեղամասը:
- 1990թ. ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ ժողովրդական տնտեսության կառավարման պրոցեսների ավտոմատացման կենտրոնի Կապանի գիտաարտադրական բաժանմունքը:
- 1990թ. սկսվեց քարամշակման գործարանի շինարարությունը (լեհական սարքավորումներով):
- 1990թ. սկսվեց մեքենաշինական գործարանի նոր մասնաճյուղի կառուցումը, որտեղ պիտի արտադրվեին ավտոմատ համակարգով աշխատող եզակի հանքահարստացնող մեքենաներ:
- Շրջանում ստեղծվեց 42 այգեգործական ընկերություն, որոնցում ընդգրկված էր 3200 մարդ, ընկերություններին հատկացվեց 213հա հողատարածություն:
- 1990թ. սկսվեց Գեղի-Կապան տեխնիկական ջրատարի անցկացումը:
- 1990թ. շահագործման հանձնվեց Կապանի մսի կոմբինատի սառնարանային նոր տնտեսությունը:
- 1990թ. սկսեց կառուցվել Կապանի օդանավակայանի նոր շենքը:
- 1990թ. նախաձեռնվեց Կապան քաղաքի կենտրոնը Շինարարների թաղամասի հետ կապող ճոպանուղու կառուցումը, նախագծային աշխատանքները կատարվում էին Վրաստանում, ինչը, սակայն, ավարտին չհասցվեց:

ՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԸ



ՀԳՃՀ Կապանի մասնաճյուղի երեք մասնաճյուղի կառուցումը սկսվեց 1975-1976թթ.

ՀՀ կառավարության արտահերթ նիստը

Տեղական իշխանությունների հետ փոխհամաձայնեցնելով՝ 1992թ. մայիսի 6-ին ՀՀ գերագույն խորհրդի պատգամավոր Կարեն Սյրպյանը (Կապանի քաղաքի խորհրդի պատգամավոր Ռուբեն Սարգսյանի հետ) հանրապետության վարչապետին ներկայացրեց շրջանում տիրող իրավիճակը եւ դրանից բխող խնդիրները: Լսելով շրջանի ներկայացուցիչներին, վարչապետ Գագիկ Հարությունյանը իրավիճակը կառավարության արտահերթ նիստ, որի ընթացքում մանրամասնորեն քննարկվեցին բարձրացված հարցերը: Ստեղծվեց հանձնաժողով՝ պետնախարար Հ.Հակոբյանի գլխավորությամբ, որը պետք է վերահսկեր համապատասխան գերատեսչություններին տրված հանձնարարությունների կատարման ընթացքը: Արտահերթ նիստում եղան կոնկրետ հանձնարարականներ: Մասնավորապես հանձնարարվեց կապի նախարարությանը՝ կարճ ժամանակում վերականգնել վնասված կապը, առողջապահության նախարարությանը՝ շտապ կարգով Կապանի շրջանին ապահովել անհրաժեշտ դեղորայքով եւ բուժամյութերով: Կառավարության որոշման համաձայն տեղի ունեցավ օպերատիվ կառավարման հանրապետական շտաբի նիստ, որի ըն-

թացքում պետնախարար Ռուբեն Զիֆթալարյանի կարգադրությամբ կրկնակի ավելացվեց շրջանին հատկացվող վառելիքը (բենզինը), առանձնակի ուշադրությամբ քննարկվեց շրջանին սննդամթերքով ապահովելու խնդիրը: Շրջանի՝ հնարավոր բոլոր կայանի պայմաններում բնակչության կենսունակությունն ապահովելու նպատակով խնդիր դրվեց ստեղծել սննդամթերքի մեկ ամսվա պետական ռեզերվ: Պատե-



2002թ., ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի այցը Կապան



1987թ., հանրահռչակ կոմպոզիտոր Յան Ֆրենկելը Կապանում



1985թ., ՀԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանն ու ՀԽՍՀ կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը՝ Գեղի ջրամբարի շինարարությունում

րազմական իրավիճակում սննդամթերքի մատակարարումը կազմակերպելու համար տրամապորտի նախարարությանը հանձնարարվեց շրջանին հատկացնել լրացուցիչ ավտոտրանսպորտ: Հանձնարարականներ տրվեցին գյուղատնտեսության եւ արդյունաբերության նախարարություններին՝ շրջանին հատկացնելու անհրաժեշտ նյութեր եւ միջոցներ՝ ձեռնարկությունների ու գյուղական տնտեսությունների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ժամանակակի մամուլի էջերից

Լեռները սիրում են ուժեղներին

«Գրական թերթի» թղթակցի գրույցը կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Կարեն Մկրտչյանի հետ (տպագրվում է կրճատումներով)

Սկիզբը՝ էջ 6

Գից: Ձեր շրջանում էլ մույն վիճակն է:

Կ.Մ. – Ես՝ շրջկոմի առաջին քարտուղարս, բնավ դեմ չեմ, որ այս տարածքի իշխանությունն իրականացնի շրջանային խորհրդի գործերը: Միայն թե համրապետության ղեկավարները թող ինձնից պատասխանատվություն չպահանջեն այն գործերի համար, որ պիտի կատարի շրջխորհուրդը: Այս բանում արմատական, հիմնավոր վերափոխում է պետք, ամբիոնից մի հայտարարությամբ կամ գրչի մի հարվածով 70 տարվա իրադրությունը չի փոխվի:

– Դուք շրջան եք ղեկավարում: Ձեր կատարած աշխատանքն անձամբ Ձեզ բավարարում է:

Կ.Մ. – Ոչ: Առաջին հերթին այն պատճառով, որ մեծ չարչարանքը երբեմն չնչին արդյունք է տալիս: Շատ են ուզում լավ բաներ անել իմ բնօրրանի, իմ ժողովրդի համար, բայց միշտ չէ, որ կարողանում են, խանգարող այնքան հանգամանքներ կան:

– Իսկ ի՞նչն է խանգարում Ձեր առօրյա աշխատանքին:

Կ.Մ. – Թեկուզ այն, որ միջին հաշվով շաբաթը մեկ անգամ երեւան են կանչում: Կապ չունի՝ ամա՞ռ է, թե՞ ձմեռ, ճանապարհը փա՞կ է, թե՞ բաց. վարը ժամը տասին պետք է լինեք այսինչ ընդունարանում եւ վերջ: Ո՞ւմ ինչ գործն է, որ դրա համար ես ու շրջխորհրդի գործկոմի նախագահը պետք է գիշերվա երեքին ճանապարհ ընկնենք: 320կմ:

Իսկ գործերը շատ են: Մինչեւ տարեվերջ պետք է շահագործման հանձնվի 21

հազար քառակուսի մետր բնակմակերես, որից 1600-ը գյուղական վայրերում: Շուտով Ղափանում կգործի 1500 համարով հեռախոսակայան, դրանից ավելի հզորն արդեն շարք է մտել Քաջարանում: Կառուցում են հեռուստատեսային չորս մոդկայան, պահածոների եւ մարմարե սալիկների արտադրության գործարաններ: Վերականգնվել է Գեղամուշի եկեղեցին եւ, հարգելով համայնքի պահանջը, որոշված է այն գործող դարձնել: Հայտ ենք ներկայացրել Ղափանում ստեղծելու տրոլեյբուսային երթեւեկության համակարգ, ճոպանուղի, որոնց նախագծման աշխատանքներն ընթացքի մեջ են:

– Ասացիք գործող եկեղեցի, լավ բան եք անում, ժողովուրդն անեն ինչից հավատազրկվեց ու կրկին անդրադարձավ աստծո խղճմանը...

Կ.Մ. – Ամեն ինչի՞ց: Կուսակցությունը նկատի ունեք:

– ...
– Կ.Մ. – Մեզ մոտ այդպես չէ, այստեղ դեռես հավատ կա: Շրջկոմի իրահանգիչն առաջվա պես առավոտից երեկո թուրք չի մոտում, ունի իր գյուղը կամ քաղաքային թաղամասը, որի հոգսերով զբաղվում է եւ պատասխանատու է նրա ամեն ինչի համար: Ոչ, վստահ եմ, որ Ղափանի ժողովուրդը չի կորցնի հավատը շրջանի կուսկազմակերպության նկատմամբ:

– Իսկ վերակառուցման մասին ի՞նչ կասեք: Անձամբ Դուք հավատու՞մ եք վերակառուցման հաղթանակին:

Կ.Մ. – Հավատում եմ, որ այն երբեւէ կիրականանա: Չի կարելի ապրել եւ ոչ մի բանի չհավատալ:

«Գրական թերթ», N46, 1989թ.



1986-87թթ. սկսվեց Ներքին Հանդ գյուղի վերաբնակեցումը



Հայրենական մեծ պարերազմում գոհված 2036 կապանցիների հիշատակը հավերժացնող հուշակոթողը, կառուցվել է 1990թ., ճարտարապետ՝ Յուլյա Արմենյան

Դրամագույն

Նա Կապանի առաջնորդը եղավ դժվարին օրերում

Սկիզբը՝ էջ 1

անկախ պետականության անցման շրջանում մեզանում շատ բան փոխվեց, մի գաղափարախոսությունը մյուսին փոխարինեց, բայց մայր գերանը չկոտրվեց, մայր սյունն էլ չծավվեց: Այդ մայր գերանը, այդ մայր սյունը հայի տեսակն է, հայկականությունն է, հայի ոգին է, ազգային մեր բացարձակ արժեքներն են, որոնք վեր են ամեն մի կուսակցականությունից, ամեն մի գաղափարախոսությունից, մանավանդ որ կուսակցությունները, գաղափարախոսությունները հաճախ կեղծ են, իսկ ավելի հաճախ՝ անցողիկ ու ձեւական: Եվ կարելորդ, ըստ էության, մարդու արյունակցությունն է ազգային արժեքներին, նրա ներդրումը երկրի, երկրամասի առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծման գործում: Եվ եթե այդ տեսանկյունով դիտարկենք Կարեն Մկրտչյանի գործունեությունը, ապա կտեսնենք, որ նա եւ կոմկուսի, եւ ՀԿԿ-ի անդամատուները հնարավորինս ծառայեցրել է Կապանի առջեւ կանգնած խնդիրների լուծմանը, ասել է թե՛ մեր երկրամասի հզորացմանը:

Կարեն Մկրտչյանը մարդկային մի շարք առաքինությունների կրող է՝ բարեկր-

թություն, համեստություն, կամեցողություն, չափի զգացում, մարդամոտություն, վատհաված գործի հանդեպ պատասխանատվություն... Այդ որակները նրա մեջ ձեւավորվել, շաղխվել են յուրովի: Համո Սահյանն է ասում՝ անհայր տղան մանկություն չի ունենում, երիտասարդ չի լինում եւ շուտ է այրանում: Տասներեք տարեկանում ծնողներ կորցրած Կարեն Մկրտչյանը (ուղբը պատանեկության շեմին դեռ չդրած) ավագ եղբոր ու քույրերի հետ իր ուսերին առավ հայրական օջախի, կյանքի հոգսերը: Միգուցե եւ դա է պատճառ եղել, որ սկզբից ի վեր ապավինել է սեփական ուժին, կյանքում իր իսկ ձեռքով հարթել սեփական ուղին:

Մարդը փոխվում է անընդհատ: Դա, կարելի է ասել, տիեզերքի օրենքներից է, որից ոչ ոք չի կարող խույս տալ: Կարենում այն է, թե այդ փոփոխությունը մարդուն որտեղ եւ որ հանգրվան է դուրս բերում: Կարեն Մկրտչյանի հետ շփումներից, նրա մերօրյա գործունեության առանձին դրվագներ քննելուց չի կարելի չտեսնել, որ մարդկային նրա որակների մեջ ողջամիտն ավելի իշխող է դարձել, անկեղծությունը՝ ավելի բյուրեղացել, ազատությունը՝ ավելի ակնհայտ դարձել: Կուսակցական պաշտոնյային հատուկ հոգեբանական բարդությամբ էլ, կարծեք, ձերբազատվել է: Հանրապետության խոշոր շրջաններից մեկի ղեկավարի համար այնքան էլ դժվար չի եղել հետագայում (եւ առայսօր) նույն շրջանում երկրորդական բնույթի աշխատանքներ կատարելը: Գուցե եւ այդ շտրի-

խը չկարելուրեհնք, եթե չտեսնեինք երբեմնի ամենագոր առաջին քարտուղարներից շատերի մինչեւ այսօր հարատևող ինքնահիացումն ու իրականությունից կտրվածությունը: Ինքն էլ կարող էր հետխորհրդային շրջանում հեռու կանգնել եւ կողքից հայեցողի դեր ստանձնել: Ինքն էլ կարող էր չմտառաջին իր քաղաքական ծածանմանը: Բայց իրականությունից չօտարվելու հավատամք որդեգրեց եւ ակտիվորեն խառնվեց մեր ներկա կյանքին՝ հստակ պատկերացնելով, որ կոմկուսի շրջկոմի երբեմնի առաջին քարտուղարի՝ նոր՝ ցեղակրոն, ազգային կուսակցության դրոշի տակ հայտնվելը կարող է եւ դատապարտելի ու անհասկանալի լինել շատերի համար:

Իհարկե, ազնիվ չէր լինի նրանից պահանջել (ակնկալել) մեծ հարցադրումների պատասխան (ինչպես եւ չենք պահանջում ու ակնկալում շրջանային մասշտաբի այդ օրերի մյուս ղեկավարներից): Բայց հավակնություն էլ չունեք նրան ներկայացնել միայն դրական լույսով: Շատերս, ինչպես եւ Կարեն Մկրտչյանը, իմպերիայի կողմն էին: Իմպերիան յուրաքանչյուրիս մեջ էր, առավել եւս՝ կուսշրջկոմի առաջին քարտուղարի մեջ: Ի վերջո կար եւ մեծ հայրենիքի ընկալումը, կար եւ կայսրության դիկտատը (ցանկացած իշխանություն իր դիկտատն է ունենում): Սակայն նա, ինչպես գործընկերներն են վկայում, այդ պայմաններում միշտ էլ ցուցաբերեց ազգային մտածելակերպի ու արժանապատվության, փոքր հայրենիքի ճիշտ ընկալումը չկորցնելու զգաստություն: Այնպես որ՝ ժամանակաշրջանը թույլ

չէր տա, որ նա գերծ լիներ մարդկային թուլություններից եւ թերություններից, որ չունենար բացթողումներ, չիրագործված մտահղացումներ, վիճելի կողմնորոշումներ եւ առավել վիճելի սկզբունքներ: Նա ավելի շատ խաղաղ ընթացքի, անկեղծ ընթացքի կողմնակից էր եւ է, որին սխալմամբ հարմարվողականություն ենք անվանում հաճախ, ինչը գուցե պատճառաբանված էր այն օրերում՝ շրջանի շահերը հաշվի առնելով, ինչը միգուցե ավելի բացատրելի է հակասական մեր օրերում: Բայց նրա թերություններն ու բացթողումները երբեք ծայրահեղ դրսևորումներ չունեցան, երբեք նրան անկումի կամ ձախողման չհասցրին: Ինքն իր կարծիքը, ինչպես գործընկերներն են վկայում, վերին ճշմարտություն չհամարեց անգամ կուսշրջկոմի առաջին քարտուղարի մտույցի վրա գտնվելու ժամանակ: Այլոց կարծիքի հետ հաշվի մատչել, ուրիշների դիրքորոշումը հարգելու ապրելու նորմ էին եղել ու են, ինչի համար եւ հանդուրժելի են եղել ու են նրա բացթողումներն ու թերությունները (անգամ քաղաքական ընդդիմախոսների կողմից):

Ընթերցողին այսօր ներկայացվող մյուս թերը ոչ միայն հիմնավորում են նրա կերպարի մեր ընկալման իսկությունը, այլեւ բազմակողմանիորեն ներկայացնում Կարեն Մկրտչյան մարդու, քաղաքացու, պետական եւ կուսակցական գործչի կյանքի ուղին, ինչպես եւ մտածումները մեր հետագա ճանապարհի եւ, մասնավորապես, Կապանի այսօրվա ու վաղվա մասին:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Այունյաց երկիր
S U N I A C Y E R K I R . A M
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐԱԿԱՋՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

Ռեզանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: